

ՔԱՅՔԱՅԻՉ ԱՂԱՆԴ.

ԻՆՉՊԵՍ ԴԻՄԱԿԱՅԵԼ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆԸ

Ի. Վ. Օլեյնիկի և Վ. Ա. Սոսնինի հեղինակած հոդվածի մեջ ներկայացված են հոգեորսության ժամանակ կիրառվող տեխնոլոգիաների վերաբերյալ պրոֆեսիոնալ հոգեբանական տեսակետներ: Հեղինակները բացատրում են, թե ինչ պատճառներով են մարդիկ ներքաշվում աղանդավորական խմբերի մեջ, և ի՞նչն է գրավում նրանց: Այնուհետև տալիս են գործնական խորհուրդներ՝ ինչպես խուսափել սպառնացող վտանգից, օգնել հարազատներին, ովքեր ընկել են աղանդի ազդեցության տակ: Թեման շատ արդիական է, ուստի վերը նշված հոդվածից թարգմանվել են հատվածներ, որոնք ներկայացնում ենք մեր ընթերցողների ուշադրությանը:

**ՔԱՅՔԱՅԻՉ ԱՂԱՆԴԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ
ԲՆՈՐՈՇՈՂ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մարդը, ով շատ մակերեսորեն է ծանոթ համաշխարհային կրոնների կողմից սահմանված կրոնաբարոյական օրենքներին, կարող է դժվար կողմնորոշվել իրեն առաջարկվող հավատալիքների ճշմարտացիության կամ խաբեության հարցում: Հետևաբար, նաև չի կարող գնահատել իր ֆիզիկական և հոգևոր առողջությանը սպառնացող այն պոտենցիալ վտանգը, որն սպասվում է առաջարկվող աղանդին անդամակցելիս:

Ներկայացնենք քայքայիչ աղանդներին բնորոշող որոշ առանձնահատկություններ.

1. Աղանդի անդամները պետք է լիովին և անխոս ենթարկվեն կազմակերպության կարգուկանոնին: Նրանց չեն տեղեկացնում այն մեթոդների մասին, որոնք պետք է կիրառվեն իրենց գիտակցությունը կառավարելու համար: Որպեսզի հավատացյալները լիովին կախվածության մեջ լինեն աղանդից, «առաջնորդները» դիմում են հոգևոր-հոգեբանական բռնությունների:

2. Կիրառվող հոգեբանական ազդեցությունների և հոգեմետ միջոցների շնորհիվ քայքայիչ աղանդի հետևորդը զոմբիացվում է, և նրա գիտակցության մեջ խաթարվում են իր սեփական սոցիալական հարաբերությունների, այդ թվում՝ մտերիմների և հարազատների հետ ունեցած կապերը: Գլխավորը հավատացյալի անհատականության քայքայումն է:

3. Աղանդի «առաջնորդներն» ամեն կերպ ձգտում են հարստանալ՝ խուսափելով պետական հարկերը վճարելուց, ստիպողական հանգանակությունների միջոցով: Իրենց նպատակներին հասնելու համար հաճախ դրդում են ամուսիններին ամուսնալուծության՝ ունեցվածքի բաժանման ակնկալիքով, կառավարում են ծնողների և երեխաների կոնֆլիկտները՝ հօգուտ սեփական շահերի: Նոր անդամագրվածների անչափահաս երեխաներին ձգտում են վերցնել իրենց խնամակալության տակ:

4. Աղանդների ղեկավարությունն ամեն կերպ բացասական և անհանդուրժող վերաբերմունք է ներշնչում խմբի անդամներին՝ արտաքին հասարակության հանդեպ, համոզելով, որ աղանդի նպատակները բարձր են աշխարհիկ օրենքներից, քանի որ անհրաժեշտ են համայն մարդկության փրկության համար:

5. Աղանդի անդամներին հասցնում են մինչև անօրինական գործողություններ կատարելու պատրաստականության: Ահաբեկիչներին և ինքնասպաններին պատրաստում են հատկապես այդպիսի քայքայիչ աղանդավորական խմբերում:

6. Ֆիզիկական բռնության մեթոդներ են կիրառում այն անդամների հանդեպ, ովքեր փորձում են դուրս գալ աղանդից:

7. Աղանդների ղեկավարությունը ծայտված կերպով ձգտում է պետական իշխանության՝ հնարավորինս բարձր ոլորտում, որպեսզի անհրաժեշտ դեպքում կարողանան իրականացնել հակապետական գործողություններ:

Այս շարքը կարելի է շարունակել, սակայն ընդհանրացնելով կարող ենք ասել, որ քայքայիչ աղանդները ձգտում են խաթարել պետության հիմքերը, գիտակցաբար մոլորեցնել մարդկանց՝ տարբեր մեթոդներով, այդ թվում հիպնոսի միջոցով ազդելով վերջիններիս գիտակցության վրա՝ ներդնել իրենց անհրաժեշտ ինֆորմացիան, որի հետևանքով ունենում են սեփական անձը և հոգեբանությունը քայքայող մարդ՝ վերածված զոմբիի, ում մոտ բացակայում է ինքնատիրապետումը և շրջապատի հանդեպ ադեկվատ վերաբերմունքը: Այդպիսի մարդը դառնում է հասարակության համար վտանգավոր, պատրաստ՝ իր «հոգևոր առաջնորդի» կարգադրությամբ գնալ ցանկացած հանցագործության:

Ինչպես ցույց են տալիս հոգեթերապևտիկ աշխատանքները՝ աղանդից տուժվածների հոգեբանական վերականգնման և նորմալ կյանքին վերադառնալու համար պահանջվում են բազմաթիվ ամիսներ: Քիչ չեն նաև դեպքերը, երբ երկարատև աշխատանքները ոչ մի արդյունք չեն տալիս:

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՄԱՐԴԻԿ ՆԵՐՔԱՇՎՈՒՄ

ԱՂԱՆԴՆԵՐԻ ՄԵՋ

Մարդը, ով իրեն համարում է ինքնահաստատված անձ, լիարժեք և բավարարված է զգում՝ դժվարությամբ կարձագանքի իրեն ոչ պետքական կոնտակտին, որն առաջարկվում է հոգեորսների կողմից: Իսկ հոգեորսությանը հեշտությամբ տրվող և աղանդավորական խմբերի ազդեցության տակ ընկնող մարդիկ ունեն հոգեբանական որոշակի բարդույթներ: Թվարկենք դրանցից գլխավորները:

1. Ցածր ինքնագնահատական, որն ուղեկցվում է անընդհատ ագրեսիվորեն պաշտպանելով սեփական վիրավորված եսը:

2. Սոցիալական անարդարության զգացում: Ընդ որում՝ սեփական կյանքի դժվարությունների համար մեղադրելով շրջապատին, կամ հասարակությանը:

3. Հասարակությունից մեկուսացված և օտարացած լինելու զգացում՝ կյանքի որևէ հեռանկար չտեսնելով:

4. Ուժգին (որպես կանոն՝ չբավարարված) ցանկություն միանալու կամ պատկանելու ինչ-որ խմբի:

Անշուշտ, չի կարելի ասել, որ վերոնշյալ բնորոշումներն ընդհանրացնելով կարող ենք կազմել պոտենցիալ աղանդավորի նկարագիրը: Առհասարակ նման մարդկանց համար աղանդին անդամագրվելը կյանքի ճգնաժամային դրությունից ձերբազատվելու միջոցներից մեկն է: Շատ դեպքերում անհատի համար կարևոր նշանակություն ունի «հոգևոր աճը և ինքնակատարելագործումը», որն էլ դրդում է նրան աղանդին անդամակցելու: Իհարկե, դա ինքնախաբեություն է. թերաթեքության բարդույթով օժտված մարդը ձգտելով բարձրացնել սեփական ինքնագնահատականը, ներքաշվում է նման խմբի մեջ, որտեղ իրեն «երջանիկ է զգում»: Այդ պատճառով աղանդավորական խումբը նրա համար դառնում է գլխավորը: Սա հրաշալի միջոց է հոգեորսության համար և հստակորեն կիրառվում է աղանդավորական կառույցների կողմից: Նրանք ձգտում են հնարավորինս հրապուրիչ երևալ նոր անդամագրվողների համար: Աշխատում են

հասցեներով և կողմնորոշվում մարդու կյանքի անհրաժեշտ տարբեր միջոցներն ու պահանջներն ուսումնասիրելով: Օրինակ՝ շեշտը դնում են հետևյալ խմբերի վրա:

ա) Մարդիկ, ովքեր ծանր ապրումների մեջ են: Դա կարող է կապված լինել անձնական կյանքի անհաջողության հետ, հարազատի, կամ սիրելիի մահվան, աշխատանքը կորցնելու, կամ որևէ հոգեբանական տրավմայի պատճառով: Այդպիսի մարդիկ հիասթափություն են զգում և գտնվում են «կյանքի իմաստի վակուումի» մեջ: Դրանից ձերբազատելու և կյանքի իմաստը վերագտնելու «հոգեթերապևտները» նրանց համար դառնում են քայքայիչ աղանդավորական կազմակերպությունները, որոնք, անշուշտ, չեն ասում այն մասին, թե նոր հավատքի գալու դեպքում անհատի հոգեբանությանը ինչե՞ր են սպասվում:

բ) Մարդիկ, ովքեր համարում են, որ ինքնակատարելագործման, հոգևոր աճի իրենց ձգտումները գնահատված չեն հասարակության կողմից: Այս խմբի մարդկանց հոգեորսներն ընգծված ուշադրության և գնահատանքի են արժանացնում, դրդում են, այսպես ասած, հոգևոր քաջագործությունների:

գ) Մարդիկ, ովքեր «կենտրոնացած» են խորհրդապաշտության, էզոտերիկայի, օկուլտիզմի վրա, և քանի որ շրջապատը հիմնականում լուրջ չի վերաբերում այդպիսի ուղղվածություններին, ապա նման հակվածությամբ մարդիկ իրենց համար «հարազատ հոգի» են գտնում աղանդավորական խմբերում:

դ) Պաթոլոգիկ ալտուրիզմի բարդությով օժտված մարդիկ: Ալտուրիզմը որպես այդպիսին դրական հատկանիշ է: Բայց ինչպես ասում է հին հունական բժշկական ասույթը. «Ամեն ինչ թույն է և ամեն ինչ դեղ է, միայն չափն է որոշում որն ինչ է»: Չափից դուրս ալտուրիզմը և մերձավորների հաշվին այլ մարդկանց օգնելու ձգտումը կարող է ծայրահեղ չափերի հասնել: Այսպիսի մարդիկ շատ հարմար են քայքայիչ աղանդների «առաջնորդների» համար, քանի որ նրանց կարելի է մաքսիմալ օգտագործել կազմակերպության շահերի համար: Բավական է վերջիններիս ասել. «Մենք էլ ենք այդպիսին, ինչպիսին և դուք: Մեզ մոտ շատ մեծ աշխատանք կա կարիքավորներին օգնելու հարցում: Եկեք միավորենք մեր ուժերը և աշխարհում ավելի քիչ վիշտ կլինի»:

ե) Իդեալիստական տրամադրվածությամբ դեռահասները, ովքեր «ճշմարտասերներ» են համարում իրենց, ձգտում են բարձր գաղափարների և կարծում են, թե պիտի փրկեն մարդկությունը: Այսպիսի երիտասարդները չունենալով կյանքի փորձ, անընդհատ հակասություններ են տեսնում շրջապատող աշխարհում կատարվող իրադարձությունների և իրենց իդեալների միջև: Եվ չուզենալով ընկալել առկա անարդարությունը, շատ մեծ հետաքրքրությամբ են վերաբերվում այն ինֆորմացիային, թե կան «գերժամանակակից» խմբեր, որտեղ այդ իդեալներն իրականություն են դառնում: Աղանդները տվյալ դեպքում բավարարում են սոցիալապես ոչ հասուն այս երիտասարդների ամբիցիաները, ովքեր ցանկանում են մասնակից լինել մեծ և բացառիկ ինչ-որ բանի:

զ) Մարդիկ, ովքեր ինքնահաստատման և հասարակության կողմից ընդունված լինելու խիստ կարիք ունեն, սակայն, դրանով հանդերձ, դեռևս կողմնորոշված չեն կյանքի իմաստի և սեփական արժեքների հարցում: Նրանց համար աղանդի «առաջնորդները» ստեղծում են «հոգատար միջավայր»՝ «ինքնահաստատվելու» համար:

ԱՂԱՆԴԻՑ ԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՊԱՅԵԼՈՒ
ՊԱՇՏԱՍՈՒՆՔԱՅԻՆ ՁԵՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Քայքայիչ աղանդների պաշտամունքային ծեսերի ժամանակ կիրառվում են որոշակի մեթոդներ, որոնք ազդում են մարդու գիտակցության վրա և նրան կախվածության մեջ պահում տվյալ աղանդից: Այդպիսի մեթոդներից են՝ խմբակային մոնոտոն կրկնողությունները, մանտրայի տևական արտասանությունները, բարձրաձայն, հատուկ ռիթմերով երգեցողությունը, որն առաջացնում է հիստերիկ ծիծաղ, լաց, անկանոն շարժումներ և ծափահարություններ: Մեխանիզմը կայանում է նրանում, որ երբ մարդու ուշադրությունը կենտրոնացած է մոնոտոն գործողությունների վրա, նրա մոտ նվազում է սեփական կյանքի փորձի ազդեցությունը և ավելի հեշտությամբ է ենթարկվում ծեսն առաջնորդողի կարգադրություններին: Առհասարակ, աղանդներում պաշտամունքների տևողությունը զգալիորեն երկար է, քան ավանդական եկեղեցիներում: Տևական, խիստ միօրինակ պաշտամունքային ծեսեր կատարելիս մարդու մոտ զգացմունքների կտրուկ արգելակում է տեղի ունենում և ցանկությունների բթացում: Առաջանում է անտարբերության զգացում, վերանում է շրջապատի և սեփական կյանքի հանդեպ հետաքրքրությունը: Հիմնովին անհետանում է հումորի զգացումը: Այդպիսի մարդկանց գիտակցությունը կարծես մշուշված լինի: Դա նման է քնից նոր արթնանալու (կամ՝ համառակը) վիճակին: Այդպիսի մարդկանց մոտ աստիճանաբար դադարում է ինֆորմացիան վերլուծելու ունակությունը և, հետևաբար, արտաքին ազդեցությունների հանդեպ դառնում են շատ դյուրահավատ: Մարդուն այդպիսի վիճակի հասցնելու համար աղանդները կիրառում են հետևյալ մեթոդները.

1. Օգտագործում են մեդիտացիոն երաժշտություն՝ անընդհատ կրկնվող, միապաղաղ քնեցնող մեղեդիներով:
2. Պաշտամունքների ժամանակ կիրառում են թույլ նարկոտիկ կամ հոլյուցինազեն միջոցներ (դրանք տրվում են ըմպելիքների միջոցով, կամ պաշտամունքի սրահում բաց են թողնում անհոտ, անգույն գազ):
3. Ջրկում են հավատացյալին նորմալ քնից: Քնի սովորական ռեժիմից զրկելը պատճառաբանվում է նրանով, որ գիշերվա որոշակի ժամերին անհրաժեշտ է արթնանալ և աղոթել:
4. Օրգանիզմը թուլացնում են՝ արգելելով վերջինիս համար անհրաժեշտ և համապատասխան սննդի օգտագործումը: Որոշ աղանդներում արգելված է ոչ միայն մսի և ձկնեղենի, այլև կաթնամթերքի, ձվի, մեղրի, աղի և օրգանիզմին անհրաժեշտ այլ սննդամթերքների օգտագործումը:
5. Առաջացնում են խրոնիկ գերհոգնածություն՝ հավատացյալին անդադար աշխատացնելով աղանդի բարօրության համար:
6. Աղանդի անդամներին մշտապես պահում են «աշխարհի մոտալուտ վախճանի» սարսափի մեջ, որի մասին հայտնում է աղանդի «առաջնորդը»:
7. Մարդուն կառավարելու և կախվածության մեջ պահելու համար կիրառում են ինֆրաձայնային տատանումների ազդեցություն, որն անհանգստություն և չկողմնորոշված վիճակ է առաջացնում: Այդպիսի էֆեկտ առաջանում է թմբուկի հաճախ կրկնվող հարվածներից (մոտավորապես վայրկյանում 3-4 հարված): Հիշենք, օրինակ, թե ինչպիսի զգացողություն ենք ունենում ուժգին թմբկահարության ժամանակ, որն ուղեկցվում է կրկեսային վտանգավոր համարի իրականացմամբ: Այս և շատ այլ մեթոդներ են կիրառվում աղանավորական խմբերի անդամների նկատմամբ, որպեսզի նրանց ենթագիտակցության մեջ ներդնեն համապատասխան բանաձևեր, որոնք կիրառելով՝ վերջիններս կդառնան հեշտ կառավարելի և կենթարկվեն իրենց «առաջնորդի» կողմից տրվող բոլոր հրահանգներին:

Ինչպես դիմակայել հոգևորությունը

Փողոցում ձեզ մոտենում է կոկիկ հագնված, քաղաքավարի և ընդգծված սիրալիր մի մարդ: Նա անպայման թույլտվություն է հարցնում ձեզնից՝ նախքան խոսակցությունն սկսելը: Ընդհանուր բնույթի մի քանի ֆրազաներից հետո անցնում է Աստծո թեմային: Նման կարգի հոգևորներն աղանդի ամենացածր աստիճանում գտնվողներն են: Նրանք շատ համբերատար և համառ են: Որպեսզի միանգամից դիմակայեք ձեզ վրա կատարվող հոգեբանական ճնշմանը, ինքներդ ձեզ հարցրեք՝ «Արդյոք կցանկանայի՞ ես էլ այս մարդու նման լինել, նրա նման ողջ օրը թափառել փողոցներում, փորձելով անցորդներին հավաքագրել»:

Ձեր ապահովության համար պետք է ի սկզբանե հստակ և սկզբունքային դիրք բռնեք: Մոտեցող աղանդավորին վերաբերվեք այնպես, ինչպես կվերաբերվեք առևտրական ֆիրմայի ներկայացուցչին, ով գովազդում է ժամկետն անց և անպիտան մի ապրանք՝ սակայն մոդայիկ և ժամանակակից փաթեթավորմամբ: Աշխատեք հնարավորինս խուսափել այդ սիրալիր և կաչուն անծանոթների հետ շփումներից: Պետք չէ վերցնել նրանց կողմից առաջարկվող աղանդավորական գրքերն ու թերթոնները, առավել ևս տալ ձեր հասցեն կամ հեռախոսի համարը: Աղանդավորների հետ շփումը կարելի է շարունակել միայն այն դեպքում, եթե որևէ պատճառով ցանկանում եք ետ պահել այդ մարդուն աղանդի կործանարար ազդեցությունից: Սակայն դրա համար դուք պետք է բավականին լուրջ պատրաստվածություն ունենաք: Հակառակ դեպքում խոսակցության մեջ մտնելն անիմաստ է:

Եթե որևէ մեկին թվում է, թե տոտալիտար (քայքայիչ) աղանդներն ամենազոր են և նրանց դեմ պայքարելն անօգուտ է, ապա հարցրեք ինքներդ ձեզ. «Իսկ բակտերիաներն ու վիրուսներն ամենազո՞ր են»: Մենք ապրում ենք վիրուսակիր միկրոօրգանիզմներով շրջապատված, սակայն նրանք ազդում են մեր օրգանիզմի վրա այն դեպքում, երբ թուլանում է մեր սեփական բիոլոգիական պաշտպանությունը: Աղանդներից խուսափելու համար պետք է վարվել այնպես, ինչպես վարվում ենք մեր ֆիզիկական առողջությունը պաշտպանելիս, այսինքն՝ բարձրացնելով օրգանիզմի դիմադրողականությունը: Տվյալ դեպքում պետք է բարձրացնել «հոգևոր իմունիտետը» և հնարավորինս խուսափել «վարակված» մարդկանց հետ շփումներից: Իսկ եթե, այնուամենայնիվ, «վարակվել եք», ապա պետք չէ զբաղվել «ինքնաբուժությամբ», անհրաժեշտ է դիմել մասնագետների օգնությանը, ովքեր փորձ ունեն անցյալի բնագավառում:

Աղանդավորական կազմակերպություններում կիրառվող աշխատանքային 6 ոլորտները:

1. Հոգևորություն

Հոգևորության առաջին օրենքն է՝ ձկանը պետք է որսալ ոչ թե ելակով, որը դու ես սիրում այլ՝ որդով, որը սիրում է ձուկը: Հոգևորսի համար ձուկը դու ես: Ահա այդ սկզբունքով էլ նա չի պատմի քեզ իր պորբլեմների և հոգսերի մասին, այլ ուշադրությամբ կլսի քո խնդիրները՝ «մերձավորին պետք է օգնել» սկզբունքով: Նա քեզ կներքաշի խոսակցության մեջ, խորհուրդներ կտա, ապա կասի, որ գոյություն ունի մի կազմակերպություն, հրաշալի մարդկանցով, արտակարգ հնարավորություններով հանդերձ: Նա կառաջարկի քեզ հյուրընկալել, ասելով՝ «համեցի՛ր, եթե չհավանես»

կարող ես հեռանալ»: Սակայն մի մոռացիր, որ շատ հավանական է հետ դարձի ճանապարհ այլևս չունենաս:

2. Իշխանություն

Աղանդի կառուցվածքը ներսից նման է բուրգի: Եթե բերես 10 ընկեր՝ արդեն «շեֆ» ես, կհավաքագրես 100-ին՝ ավելի կբարձրանաս: Իշխանության խայժը շատերն են կուլ տալիս: Դեռևս երեկ քո խոսքը ընկերներիդ մոտ անգամ չէր անցնում, ուր մնաց ծնողներիդ և հարազատներիդ, իսկ այսօր այն օրենք է տաս, քսան, հարյուր մարդու համար:

3. Կանոնակարգ

Ինչքան էլ զարմանալի է, սակայն աղանդավորներն անգամ մատնիչների համար են արդարացում գտնում: Եթե ընկերոջդ «ծախել ես», դրանով նրան միայն օգուտ ես տվել, որովհետև քանի դեռ նա չի քավել մեղքերը՝ երկնքի դռները փակ են նրա առաջ: Այնտեղ մեղավորներին չեն վերցնում: Այնպես որ պետք է շնորհակալ լինես «գործ սվողին»:

4. Փողեր

Աղանդը տնտեսապես ձեռնտու պոնյա է՝ մերձավորի գրպաններից հեշտությամբ փողեր ներքաշելու համար: «Աշխարհիկ գայթակղություններից զերծ մնալու» լոզունգով աղանդի անդամներն սկզբից այնտեղ տանում են իրենց փողերը, հետո ծնողներինը, ապա ընկերներինը... Քեզնից և քո ընտանիքից վերցնում են ավտոմեքենան, ամառանոցը, բնակարանը: Ընդ որում ոչ թե խլում են, այլ դու ինքդ ես տալիս, դեռ մի բան էլ շնորհակալություն ես հայտնում: Քեզ կդրդեն քրտնաջան և միանգամայն ձրի աշխատել աղանդի նպատակների համար, հակառակ դեպքում չես հասնի «աստվածային իմաստությանը»:

5. Գաղտնիք

Նորեկին շատ բան չեն պատմում: Դու երբեք չես իմանա ինչով են զբաղվում «յոթերորդ աստիճանի լուսավորյալները»: Միայն մի թեթև կակնարկեն, «յոթերորդ աստիճանում» կան գիտելիքներ՝ աշխարհի, ինքդ քո, Աստծո մասին: Եվ դու ամեն կերպ փորձում ես հասնել այդտեղ, ընդունելով այն ամենը, ինչը անում են քեզ հետ՝ համարելով դրանք դեպի գաղտնիքը տանող ճանապարհի անհրաժեշտ փորձություններ: Իսկ երբ վերջապես հասկանաս, թե ինչ է կատարվում իրականում, արդեն սարդոստայնի մեջ կլինես, որից ազատվելը գրեթե անհնար է:

6. Հոգեբանական ազդեցություն

Ցանկացած աղանդ օգտագործում է գիտակցության կառավարման հատուկ մեթոդներ, որպեսզի անհատին կախվածության մեջ պահի աղանդից. օրինակ՝

- Քո ողջ անցյալը կհայտարարեն հիմարություն և անիմաստություն, որն արժանի չէ ոչ մի ուշադրության: Քեզ կներշնչեն, որ յուրաքանչյուր մարդ, ում հետ դու ծանոթ էիր նախկինում, իրենից ոչինչ չի ներկայացնում, հիմարի միկն է, ով «իրական կյանքից» ոչինչ չի հասկանում:
- Ոչ մի վայրկյան չպետք է կորցնել, - կասեն քեզ: Եթե ներկա պահին չես լսում «ուսուցչի» դասախոսությունը, ուրեմն կարդա աղանդի թերթոններից: Եթե չես կարդում՝ յոգայով զբաղվիր: Լսիր հատուկ երաժշտություն և մեդիտացիա արա, աշխատիր հավատացյալների բարօրության համար:
- Քո աշխարհը կբաժանվի 2 մասի՝ թշնամիների և ընկերների: Ընկերները՝ աղանդի ներսում են, իսկ թշնամիները՝ դրսում, ովքեր քեզ չեն հասկանում և երբեք էլ չեն հասկանա:

- Բավական է տասնյակ մարդ մեկ անգամ ասեն՝ «դու խոզ ես», և դու կսկսես խոզի պես խոխոխալ: Փորձված է:
- «Սնվել, քնել՝ երբեք, ամբողջ կյանքդ քնած կանցնի», - այսպես կասեն քեզ, քանի որ սոված և հոգնած մարդուն շատ ավելի հեշտ կարելի է ներշնչել ցանկացած աղբ:
- «Խելքով երջանկության չես հասնի»: Եթե «ուսուցիչն» ասում է, որ պետք է առաստաղի վրայով քայլել և ընդունել «ՄԸԸ», պետք է կատարել, այլ ոչ թե մտածել:
- Աղանդում օգտագործվում է հատուկ լեզու՝ անհաջող կերպով ըտրված գիտական և օկուլտային տերմինալոգիաներից: Սկսելով խոսել այդ լեզվով, դու արագ կորցնում ես կապը իրականության հետ և սկսում մտածել այնպես, ինչպես ձեռնառու է աղանդի ղեկավարներին՝ բուրբ և հետադարձ ուղղությամբ:
- «Քո ականջները տաքանում են... Մարմնիդ վրա հանգստություն է իջնում... Մկանների թուլանում են... Մտածիր միայն լավ բաների մասին»: Կասես, որ դա հիմարների համար է, սակայն այդպես չէ: Մեղիտացիան, հիպնոզը, աութոթերեյնինգը հրաշալի միջոցներ են գիտակցության մեջ ներդնելու այն ամենը ինչը ցանկանում են:
- «Այնտեղ, պատուհանից դուրս, ահավոր աշխարհն է: Բոլորը պատրաստ են իրար խժռել: Այստեղ դու ընկերներիդ հետ ես: Այստեղ լավ է: Բայց հիշիր՝ մենք այնքան բան ենք արել քեզ համար, այնքան էներգիա ենք ծախսել քեզ վրա: Դու մեզ պարտական ես մինչև կյանքիդ վերջը»: Քանի դեռ դու հավատում ես սրան և ինչ-որ բանի հույս ունես անհնար է դուրս պրծնել աղանդավորների ճանկերից: Այս մեթոդները կատարյալ են: Դրանց միջոցով գլխավոր «ուսուցիչը» հեշտությամբ կջարդի քո անհատականությունը, կվերածի քեզ խամաճիկի: Քո իրական էությունը շատ խորքը կթաղվի, իսկ մակերեսին կմնա հլու հնազանդ, լիովին բավարարված, սեփական Եսը կորցրած էակ:

«Ինչ վատ բան կա նրանում, որ ես պարզապես հյուր գնամ և տեսնեմ թե ինչ է կատարվում այնտեղ»: Սա այն հարցերից է, որոնք հաճախ տալիս են երիտասարդները:

Ոչ ոք չի ուզում մենակ լինել: Յուրաքանչյուր ոք ցանկանում է ընկերներ գտնել, որոնց հետ կզրուցի կյանքից, ովքեր կօգնեն, եթե որևէ բան պատահի: Լինում է նաև այնպես, որ ընկերները կան, սակայն կյանքն այնուամենայնիվ անհետաքրքիր է. տուն-դպրոց-տուն... Ինչ-որ մի յուրահատուկ բան ես ուզում:

Եթե քեզ հետ այդպիսի բան է կատարվում, ուրեմն դու աղանդի պոտենցիալ զոհ ես: Ամեն մեկը չի, որ ընկնում է աղանդի մեջ: Որոշներին նույնիսկ ստիպողաբար չես կարող այնտեղ քարշ տալ: Եթե դու ինքնավստահ ես, զոհ ես կյանքից, ապա ավելի շուտ կծիծաղես հոգևորսների վրա, որոնք ուզում են քեզ հետ «զրուցել գոյության իմաստից»: Իսկ եթե որոշես գնալ պարզապես տեսնելու համար, ապա իմացիր, որ առաջին հերթին քեզ կողողեն սիրալիրություններով, ժպիտներով հաճոյախոսություններով: Քեզ կշրջապատեն սիրալիր և գեղեցիկ տղաներ և աղջիկներ, ովքեր պատրաստ են ամեն ինչում օգնել: Իսկ դու կմտածես. «Նրանք ամենևին էլ գազաններ չեն, հաճելի մարդիկ են, իհարկե մի քիչ կաչուն են, բայց ով չունի թերություն»: Եվ այդ ժամանակ էլ կատարվում է ամենավտանգավորը՝ դու սկսում ես նրանց վրա դնել քո սեփական երջանկությանը վերաբերող բոլոր

խնդիրները, թույլ ես տալիս, որ կյանքդ նրանք կառավարեն՝ մտածելով, որ. «Այս մարդիկ գիտեն ինչպես երջանիկ դարձնեն ուրիշներին: Թող ինձ էլ դարձնեն»:
Աստիճանաբար, առանց քեզ վրա ճնշում գործադրելու, կսկսեն ներշնչել, թե ինչքան հիմար մարդիկ են քո ծնողները և բարեկամները: Քեզ համար շատ հեշտ կլինի դավաճանել նրանց, քանի որ այդ հարաբերությունները կդադարեն կարևոր լինել քեզ համար: Աղանդում գիտեն, որ դու անշուշտ կերկմտես, սակայն նրանք առաջին անգամ չեն աշխատում քեզ նմանների հետ, այդ պատճառով շատ լավ մշակված մեթոդիկա ունեն:

Մինչև կհասցնես հասկանալ, թե ինչ է կատարվում, արդեն ուշ կլինի, քանզի դու խճճված կլինես այդ ցանցի մեջ: Քեզ համար կմնա երկու տարբերակ՝ Առաջինը՝ առանց հանգստի, առանց գլուխդ բարձրացնելու օր ու գիշեր կաշխատես, որպեսզի կապիտալ դիզես աղանդի ղեկավարների համար, դրանով հանդերձ կհավատաս, որ այդ ամենն անում ես հանուն բոլորի բարօրության: Մի օր էլ կդադարես հավատալ, սակայն այլևս ուժ չես ունենա որպեսզի դուրս գաս աղանդից, և հետո ո՞ւր գնաս: Բոլոր կամուրջներն այրված են: Կյանքիդ ողջ իմաստը մի քանի անիմաստ գրքեր ու հիմար բառեր են: Եվ հետո թույլ էլ չեն տա հեռանա, քանի որ ամենևին պետք չէ, որ դրսի մարդիկ իմանան, թե ինչ է կատարվում աղանդի ներսում: Իսկ վերջում քեզ աղբանոցը կնետեն: Այլևս պետքական չես: Երկրորդ դեպքում՝ կդառնաս ղեկավար և մյուսներին կաշխատացնես: Կսկսես հաճույք ստանալ նրանից, որ քո առաջ ծնկի են իջնում աղանդի մյուս անդամները, թեկուզ նախկինում դու այդպիսին չէիր:

Ձեր մտերիմն ընկել է աղանդի մեջ. ինչպե՞ս փրկել նրան:

Աղանդում մարդիկ արտաքուստ գտնում են այն, ինչը չեն գտնում հարազատների հետ շփումների ժամանակ՝ բարություն, փոխըմբռում, իրեն կարևոր մարդ զգալու ցանկություն: Դուք իհարկե գիտեք, որ այդ ամենը միայն ձև է, սակայն նա չգիտի և իրեն լավ է զգում:

Անհրաժեշտ է ստեղծել նոր հարաբերություններ ձեր մտերիմի հետ, և պետք չէ նրան հանդգել, որ սխալվում է: Առավել ևս պետք չէ զգացմունքներով առաջնորդվել: Հիշեք, որ աղանդում նրա համար արդեն կան շատ «հոգատար ընկերներ», ովքեր իրեն հրաշալի հասկանում են: Պետք է նաև հաշվի առնել, որ աղանդը հեշտությամբ բաց չի թողնի ձեր հարազատին: Նաև կարիք չկա գնալ այնտեղ և խնդրել, որ բաց թողնեն ձեր ընկերոջը, հարազատին: Դա անիմաստ է: Նույնիսկ հնարավոր է ձեզ էլ բաց չթողնեն: Ինչ-որ պահից սկսած աղանդի ազդեցությունը ձեր հարազատի վրա ավելի ուժեղ կլինի քան ձերը: Դուք պետք է կիրառեք այնպիսի հոգեբանական մեթոդներ, որոնցով կկարողանաք ազդել ձեր մտերիմի վրա: Հիշեք, որ աղանդից դուրս եկողի համար շատ կարևոր է իմանալ, որ նա կարող է հենվել իր հարազատի կամ ընկերոջ վրա: Միայնակ հնարավոր չէ այդ խնդիրը լուծել անհրաժեշտ է հոգեբանական աջակցություն: Պետք է հասկանալ այն բոլոր պատճառները, որոնք դրդել են ձեր հարազատին ընկնել աղանդի ազդեցության տակ: Աղանդից դուրս գալը դեռևս բավարար չէ, պետք է նախկին աղանդավորի համար համապատասխան պայմաններ ստեղծել, հասկանալ այն բոլոր սխալները, որոնք նախկինում թույլ են տրվել նրա հանդեպ և փորձել շտկել դրանք, որպեսզի վերջինս իրեն լիարժեք և բավարարված զգա ձեր կողքին և նորից չընկնի որևէ աղանդի մեջ: